

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան 10 թուր, կես տարվան 6 թուր:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միայն ներքաղստան մէջ:
Ստորագրողացիք լինում են ուղղակի
Տիֆլիս. Պեդակցիա «Մշակ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրատանկար բառին 2 կոպեկ:

ՄՇԱԿ ԼՐԱԳԻՐ ՔՈՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ 1881 թ. 1 թ.

«ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ»

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոպագանդայով ԱՄՆԵՆ ՕՐ (բացի տոն և տօներին հետևող օրերից):
ՊՐՈԳՐԱՄԱՍ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիտոն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:
ԼՐԱԳՐԻ ԳՆՆԸ, տարեկան 10 թուր, կես տարվան 6 թ., հինգ ամս. 5 թ., չորս ամս. 4 թ., երեք ամս. 3 թ. երկու ամս. 2 թ. և մի ամս. 1 թուր:
Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևող հասցեով. Тифлисъ, редакція «Мшакъ».
Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ն և ր. ք. ի ն տ և ս ու թ ի շ. Խոջի ազատութիւն, Նամակ երևանից: Նամակ Ղազարից: Նամակ խմբագրի: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Ֆաղաքական տեսութիւն: Նամակ Ֆրանսիայից: Արտաքին լուրեր:—Մշակի հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Բանասիրական Գաւիթ բէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՂՃԻ ԱՉԱՏՈՒԹԻՒՆ
«Голосъ» լրագիրը իր ներկայ տարվայ համարներից մէկի մէջ յիշեցնելով որ և

ԻՆԻԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ
(1722—1728)
ԺԱ.

Մինչև այժմ երկու մէլքների շահերը համաձայն և լծողաբար էին ընթանում: Նրանց միաբանութիւնը՝ հայ գերիները շղթայակապ մնալու, պատանի Ստեփաննոսի սպանման և Գեորգիի գաւառը իր միակ ժառանգից զրկելու վերաբերութեամբ՝ բոլորովին անկեղծ էր: Բայց երբ այդ բոլոր մեքենայութիւնները ոչնչացան, երբ գերիները ազատութիւն ստացան և Թորոս իշխանը յաղթող ճանդիսացաւ, այնուհետեւ երկու մէլքների միաբանութիւնը սկսեց փոքր առ փոքր խախտվել: Մինչև այժմ նրանք միաբան էին մէկ խորհրդի մէջ միայն, այն է՝ Գեորգիի գաւառը զրկել իր միակ ժառանգից՝ Ստեփաննոսից, բայց թէ նրանից յետոյ ուժ կը մնար այդ գաւառը, — վերջին հարցում երկուսի էլ շահերը տարբերվում էին: Մէլք Ֆրանգիլը ցանկանում էր իր ձեռքը ձգել Գեորգիի և ամբողջ Ղազարի իշխանը ձգել Գեորգիի և ամբողջ Ղազարի իշխանը ձգել իրան էր վերապահում: Մէլք Ֆրանգիլը աշխատում էր օգուտ քաղել մէլք Գաւիթի և նրա աղջկայ աջակցութիւնից միայն սկզբնական դործողութիւնների համար, բայց երբ նա պարզ նկատեց, որ աղջիկը բոլորովին հակառակ է իր հօրը, այնուհետեւ աւելի ցած ընկաւ այդ մարդու նշանակութիւնը իր աչքում և աւելի հաստատ կերպով համոզվեցաւ իր յոյսերի մէջ, թէ կառող է նրան ասպարէզից դուրս քշել:

Մէլք Գաւիթը իր կողմից նկատում էր, որ իր վարկը, իր նշանակութիւնը հետզհետեւ ցած է ընկնում իր գործակցի աչքում, որ նա մինչև անգամ դադարել է իր հետ խորհրդակցելուց և ինչ որ դադանի ձեռնարկութեան պատրաստութիւններ է տեսնում: Մէլք Ֆրանգիլի այդ ծած

կող փետրվարի 3-ին գերմանական բազմաթիւ քաղաքները կը տօնեն Լեոսինգի մահուան հարիւրամեայ յօբելյանը, նկատում է, որ կատարվում փառաւոր և շքեղ հանդէսները և արտասանելի ճոխ ճառերը բոլորովին կեղծ կը լինեն, քրոջհետեւ հակահրէական շարժումը Գերմանիայի մէջ ապացուցեց, որ երևելի Լեոսինգի գաղափարները գեռ ևս չեն տարածվել գերմանական ժողովուրդի մէջ: Գերմանացիներից շատերը ապացուցին, որ նրանք աւելի ընդունակ են քարոզիչ Շտոկերի ճառերից

կատարելու աւելի զարացրեց նրան, ևս քո հէրը կանխեմ... ասաց նա իր մտքում և դուրս եկաւ վրանից, անհամբերութեամբ սպասում էր իր ծառային, որին ուղարկել էր ներքինապետ Անմէդի մօտ լուր բերելու: Ուրաջողը ներքինապետի միջնորդութեամբ կրկին փորձ փորձեց տեսնվելու իր աղջկայ հետ, յայտնելով թէ ինքը գնալու է Տաթև և ցանկանում է նրան միաք բարով ասել: Ծառան վերադարձաւ, բերելով ուրախավ լուրը, թէ սրկինը բարեհաճել է ընդունել նրան:

Գիշեր էր: Մէլք Ֆրանգիլը այս գիշեր նոյն պէս առանձին տեսութիւն էր խնդրել խանի հետ և գնացել էր նրա մօտ, առանց այդ մասին բնագում տալու մէկը Գաւիթին: Ընկերով այդ վարժուածը աւելի կասկածաբար մէջ էր գցում նրան: Այս պատճառով նա վարժել էր խանի մանկավարժներից մէկին, որ լրտես է մէլքը: Խոսակցութիւնը խանի հետ և իրան տեղեկութիւն տայ:

Միւրին ընդունեց հօրը մի առանձին վրանում, որ լուսաւորված էր լապտերի լուսով և գտնուում էր կանանցից դուրս: Այնտեղ կանգնած էր միայն ձեռքերը ներքինապետը, իսկ սրկինը նստած էր գորգի վրա, և ինքն էլ չէր դուրս: Թէ ինչու նրան հետաքրքրում էր համարել գորգի փոքրիկ քառակուսիները, ճաննելով հօրը, նա դարձաւ գէպի ներքինապետը:

— Անմէդ, դուք կարող էք վրանը դրսում ըստ պահել:

Շերտունը հեռացաւ և նստեց վրանի կողքին, խոսեցր վրա: Միւրին դու գլուխը խոսարհեցրած, աչքերը չէր հեռացնում գորգից. հօր այցելութիւնը խանիցարեց նրան և մտապառ գորգի կողքի մի անգամ համարած քառակուսիները: Նա սկսեց կրկին համարել: Աղջկայ սառն ընդունելութիւնը սաստիկ վշտացրեց հօրը, բայց նա զսպելով իր վրդովմունքը, սկսեց հայրական մեղմ և զթառատ խօսքերով կշտամբել նրա սառն նստրտութիւնը, — սկսեց յիշեցնել նրան, թէ ինքը հայր է, թէ հօր պատիւը, հօր յարգանքը ինքն Աստուած հրամայում է զաւակներին, թէ

զրգովել, քան թէ ըմբռնել Լեոսինգի պրտաւորութեան գաղափարները:

«Գերմանիայի մէջ սկսած հակահրէական շարժումը, ասում է լրագիրը, Ռուսաստանի մէջ էլ արձագանք գտաւ: Մեր անկիրթները օգուտ քաղեցին այդ տխուր երևոյթից և սկսեցին ծաղրել խղճի ազատութիւնը այն շարժաւորներից զրգոված, որ խղճի ազատութեան գաղափարի իրարարձեց կարող են օգուտ քաղել նոյնպէս և հրէաները: Փոխանակ հին վերքերը դարձան նրանք նոր վերքեր են հասցնում: Փոխանակ քրիստոնեաներին հրէաների հետ հաշտեցնելու, նրանք աշխատում են կրօնական թշնամութիւն ծագեցնել, որի կորստաբեր հետեւանքները մինչև անգամ որոշել չէ կարելի:»

Հիմնվելով պատմական իրողութիւնների և օրինակների վրա, առաջ բերելով մի քանի նշանաւոր պատմական անձինքների վկայութիւնները խղճի ազատութեան բարերար հետեւանքների մասին, լրագիրը այն կղափարեցութեան է հասնում, որ Ռուսաստանի համար անհրաժեշտ է խղճի ազատութիւնը և դաւանութիւնների կատարել հաւասարութիւնը: Այդ երկու օրէնքները, նկատում է վերջը լրագիրը, անհրաժեշտ են Ռուսաստանի պետական կեանքի զարգացման համար:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ
—
Յունվարի 14

Առողջապահական կամ քաղաքի մարտիան համար կազմած յանձնաժողովը սկսեց իր գործը սոյն ամսի 12-ից. յուսով ենք, որ պ. բժ. Լ. Տիրանանցի նախագահութեան ներքոյ, ժողովը մեծ գործ կը կատարէ մարտիան նկատմամբ, որին այդչափ կարօտ է մեր անմաքուր քաղաքը:—

Հայոց թեմ. դպրանոցի յարգելի հոգաբարձութիւնը սկսեց արդէն ուշադիր լինել դպրանոցի նախական մասի աճեցնելուն, արդէն սկսել է զիմել 1872 թուի ստորագրվողներին, որք սիրով են վճարում իրանց խոստացած նուէրը:— Լուսն ենք, որ Ալեքսանդրապոլի յաջորդ Տ. Գ. Ստրենանը ցանկացել է գալ Երևան Գ. Եղիազար արքեպիսկոպոսի փոխարէն. ախտո միայն, որ ալեքսանդրապոլից կը գրկվեն նորին դերապատուութիւնից:—

Մի գեղեցիկ օր պ. Պապաջանեանը մի հեռագիր ձեռնարկ ցոյց էր տալիս տորան նորան, ի թիւս օրոց և Ս. Ղալուստեանցին և վարդ. Եղիազարեանցին և ասում. անս Ս. Մանուկին հրաւիրում է ինձ լինել ուսուցչապետ փլստփայտի զասերի Էջմիածնայ ճեմարանում: Մենք այդ լուրը հրատարակեցինք. նա մեզ սրտախօս անուանեց. մենք զարմացանք: Հետաքրքիր լինելով իմացանք, որ մենք ս ու լ տ և ն ք ասել, որովհետեւ նորա պայմանը չէ հաստատվել, վասն զի աշակերտները յայտնել են թէ Կառելի լաւ են համարում ոչինչ չը սովորել, քան թէ պ. Պապաջանեանցից փլստփայտի յոս վերել:—

— Ես կարող եմ, բայց չեմ անի:
— Ի՞նչու:
— Ես չէի ցանկանայ, որ Գեորգի և Բարգիւշատի հայ ընակիչները այնքան տանջվէին քո ձեռքում, որ գային խանի դրանը և իրանց կրակ տային, այրվէին, ինչպէս այրվեցին այսօր տաթևացիները:
— Միւրին, ընդունի իմ խնդրքը, աղաչում եմ, առաջ տարաւ նա ողորմելի ձայնով:— Եթէ ձեռքերի հայրը ոչինչ յարգանք չունի քեզ մօտ, գոնէ յիշի մօրդ, որ նրա կինն է եղել, որին սիրում էիր դու:
— Որին դու սպանեցիր... պատասխանեց Միւրին և նրա աչքերը վառվեցան կատաղի բարկութեամբ:
— Ես... բացականչեց հայրը սարսափելով:— Աստուած կը պատժէ քեզ, Միւրին, որ այսպէս չարաչար կերպով զրպարտում ես հօրդ:
— Եթէ Աստուծոյ պատիժները չուտ վրա հասնէին, դու այժմ այս աշխարհում չը պիտի լինէիր... պատասխանեց նա դողողուն ձայնով:— Երկունք եմ, դու սպանեցիր իմ մօրը: Կու ուրաջար Լուսաւորչի սուրբ հաւատը Տաթևի մէլքութիւնը ստանալու համար և այնուհետեւ քո տունը լցրիր մահմտական կնիկներով: Խեղճ մայրս չը կամեցաւ ապրել ուրաջող ամուսնի հետ, թողեց քո տունը և գնաց իր հօր տունը: Բանի անգամ քարշ տուցիր նրան և կամենում էիր բռնութեամբ քեզ մօտ պահել, բայց դարձեալ փախում էր նա: Բանի անգամ գաւառակովեցաւ նա քո անգուլ ձեռքերից: Բայց այս բոլոր տանջանքներին կը համբերէր նա, եթէ դու չը խլէիր նրա միակ աղջիկը—ինձ, և չը գցէիր մահմտական հարեմի մէջ: Ես երբեք չեմ մտնայ այն սղաւոր և ցաւալի օրը, երբ խեղճ մայրս, արտասուք աչքերով, տարածվել էր գեանի վրա, գրկել էր քո ոտները: Միւս կողմում կանգնած էին խանի ներքինները, իսկ մէջտեղում—ես: Մայրս աղաչում էր, պաղատում էր քեզ, որ ինձ խանի մարդկանց ձեռքը չը տաս: Ես լաց էի լինում: Կու, առ ոչինչ համարելով իմ և մօրս արտասուքը, ինձ յանձնե

Այս տարի, բացի հացն ու գինուց, ամենայն կենսական պիտոյքները համեմատաբար թանկ են, քան թէ անցեալ տարի. այսպէս մի ֆունտը 9 կ. է. Չանգլիի ձկան ֆունտը 35—40 կ., իւղինը՝ 50—60 կ., խաւարինը՝ 1 ր. 60 կ., մի հաւը 60—70 կ., 2 ձուն 5 կ.:—Եղանակները մինչև մօտ օրերս շատ տաք էին անցնում. այժմ ձիւն է գալիս և ցուրտը խիստ է. ծառերը քիչ էր մնում, որ ծաղկէին, այժմ կարող են վեաովել:—

Վշակի ընթերցողներից խոնարհաբար խնդրում եմ, որ ստորա № 229-ի առաջին երեսի երրորդ սիւնակի մէջ տպված հետեւեալ սողերը կարգաւ այսպէս: «Ոչ որ չէ մտածում որ խաւարինը տարի 500—700 հայ և թուրք ծնված երեխաներից՝ միայն 50 են ապրում հարիւր ընկերներից թէ հայ և թէ թուրք միւսները մեռնում են ըստ մեծի մասին ջրի և օդի անմաքրութեան պատճառով»: Խնդրում եմ «Кавказ» լրագրի յարգելի խմբագրութիւնից և, որ վերոյիշեալի պէս ուղղէ իր № 350-ի մէջ հարգողած տեղեկութիւնը, որը քաղել է Վշակի վերոյիշեալ №-ից: Ար որչի անգամ առիթ կունենամ «Մշակի» ընթերցողներին ցոյց տալ ճիշդ թուերով, որ այդ տեղեկութիւնը չափազանցութիւն չէ մեռնողների նկատմամբ, այլ մինչև անգամ փոքր ինչ պակաս եմ ցոյց տուել, ձեռքս չունենալով թուրք երեխաների չափաբերական առ այժմ:

Այս երեկոյ կլուբում և օր կայ էր, այդ պատճառով այնքան մեծ էր բաղնիքները, որ ասեղ ձգելու տեղ չը կար: Այդ միջոցին մի անսովոր թնդիւն դարձան բաղնիքները. լացի և վայնասունի աղաղակը շփոթեց ամենքին. մինը կոչում էր «այրվում է», միւս կոչում էր «քանդվում է»: Բանը նորանումն էր, որ մի երիտասարդ բժիշկ իր դասի նետ մտնելով կլուբի կողմնակի սենեակներից մէկը, տեսնում է, որ բնեզակա՛ն հրափամփուլաներ են դիզված՝ տնդըլու ժամանակ մինը բռնկում է և վառում միւսներին, որից անագին ձայնումն և բոց է լինում և որը հայելու են ձանդղում: Սարսափած ժողովուրդը քիչ է մնում երեխաներին ոտքի տակ արտել փախչելու համար: Ինչ կը լինէր ժողովրդի դրութիւնը, եթէ չուտ չը կարողանային ձանդղել ժամանակ չէ արդեօք, որ մեր քաղաքն էլ ունենայ հրաշք մեկնաներ:

Ն Ե Ր Ա Յ Ր

ցիր նրանց ձեռքը: Մայրս կատարութեամբ վրա վազեց, ինձ բռնեց, և երկար կռիվով նրանց հետ, չէր թողնում, որ ինձ ասնեն. Գու բռնեցի՞ր դարկեցիր մօրս գլխին, նա ուշաթափ ընկաւ գետնի վրա և այնուհետև չը վեր կացաւ նա...

Մի ուրիշ մարդ, մէլք Գաւիթի փոխարէն, հարազատ դասեր բերանից լսելով այդ անէծքը, լսելով այդ բոլոր դատապարտական խօսքերը, կը զղձար, կը փռվանէր իր եղեռնագործութեան համար, բայց նա, տեսնելով, որ իր մեղքը, գրաւի խրատներով չը կարողացաւ համոզել նրան, մտածեց վախեցնել աղջկան:

— Բայց ես չեմ կարծում, որ քո մօր յիշատակը այնքան վրդովեցնէր քեզ իմ դէմ, որքան մի ուրիշ բան...

— Ինչ բան, հարցրեց Սիւրբին, սրբելով աչքերից արտասուքը, որ հեղեղի նման թափվում էր մօր պատմութիւնը անելու ժամանակ:

— Այն բանը, որ ես քեզ խնայեցի քո սիրականի գրկից... որը այսօր քո շնորհիւ աղատութիւն գտաւ... որի վերքերը դու զարմանում էիր բանալի մէջ... և որի հետ գեռ մտածում ես շարունակել քո հին յիմարութիւնները...

— Այդ բոլորը ճշտ է, պատասխանեց Սիւրբին սասնութեամբ:— Ես Ստեփանին սիրում էի առաջ, սիրում եմ և այս րոպէիս: Այն, դու ինձ խնայիր նրա գրկից և ես այդ չեմ ների քեզ:

— Եւ կաշխատես կրկին նրա գրկին ընկել...

— Կաշխատեմ...

— Եւ կաշխատես Գեներալի իշխանութիւնը նրան վերագրածին...

— Կաշխատեմ...

— Եւ կաշխատես յետոյ փախչել գնալ նրա մօտ...

— Կաշխատեմ...

— Բայց գիտես ես ինչ կանեմ...

— Գու ինձ կը մատնես... դու այդ բոլորը կը յայտնես խանին...

— Լա հասկացար, պատասխանեց հայրը կատաղի բարկութեամբ:— Բայց գիտես խանը քեզ ինչ կանէ:

ՆԱՄՍԱԿ ՂԶԱՍԻՅ

Կենդանութիւն 28-ին 80

Ուղարկում եմ 43 բուլլը Լայպստանի տվատանջներին հասցնելու համար, որը նուիրել են մի քանի անձինք. ուղարկում եմ և ցուցակը, որը խնդրեմ տպւք ձեր լրագրում:

Խ. Ղօրղանեանց 10 ր., Ե. Թաւրթեանց 10 ր., Գ. Արքայեանց 5 ր., Բ. Աստուածատրեանց 5 ր., Գ. Բօթանեանց 5 ր., Մ. Սվեչնիկեանց 5 ր., Մ. Թումանեանց 3 ր.:

Մկրտիչ Անանեանց

ՆԱՄՍԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 15 յունվարի

Մեր քահանաները կարող են շատ բան տեսնել, եթէ ուզենան: Ահա բերում եմ օրինակ: Ամիս 11-ին, կիրակի օրը, Թիֆլիսի երկրորդ կարգի վաճառական պ. Գալուստ Ղարիբեանը մի ուրախ հացկերոյթ էր պատրաստում Մոզու միաբաններին պատուելու համար:

Առաջարկում էին տեղական սովորութեան համաձայն գինով լիք բաժանինը զանազան անձանց բարեմաղթութիւններով: Պարոն Գովհանէն Տէր-Նիկողոսեանը, որ սեղանի կառավարիչ էր (թամարա), մանաւորից անցնելով դէպի ընդհանուրը առաջարկեց ազգային անմահ բարեբարաց յիշատակի համար բարեմաղթութիւններ, ի միջի որոց և այն անձանց կենացը, որոնք իրանց ունեցած կօպէկը չեն խնայել կիսել խնդների հետ:

Բարեպատեն միջոց համարելով, այդ ժամանակ ներկայ եղող քահանաներից մինը բացատրելով ընդարձակ բարեգործութիւնների նշանակութիւնը՝ նկատեց, որ մենք պարտական ենք, նաև խրատելով, գոհ լինել այն անձինքներից, որոնք իրանց ունեցածի մի տասներորդ, մի հարիւրերորդը չեն խնայում իրանց կարօտեալ եղբայրների համար: Բաւական չէ միայն ցանկալ, բաւական չէ այդ առիթով միայն բաժանինը դատարկել, աւելացրեց նա, այդ չէ նշանակում թէ մենք նորանց սիրեցինք, այլ և պարտական ենք գործով ապացուցանել, որ, այն, մենք սիրում է օգնում ենք մեր կարօտեալ եղբայրներին, տաճկանագետական մեր սովատանջ եղբայրներին:

— Խանը ինձ խնայել կը տայ:

— Լինա լաւ մտածիր, ի դուր տեղը մի բարկացրու հօրդ:

— Ես բոլորը մտածել եմ. ինձ մնում է երկու բան:— Կամ մտնել, կամ շրա» հետ ապրել:

Մէլքը Գաւիթը չէր կարծում, թէ կը հանդիպի այս աստիճան հաստատամտութեան իր աղջկայ կողմից: Նա զգաց իր սխալը, որ խօսակցութիւնը ծայրայեղութեան հասցրեց, այս պատճառով փորձ փորձեց շարժել Սիւրբի գլխատուութիւնը:

— Սիւրբին հայրը ներողութիւն է խնդրում քեզանից, Սիւրբի, ասաց նա, բռնելով նրա ձեռքը:— Մտապէր բոլորը, ես մեղաւոր եմ քո առջև, մեղաւոր եմ և քո հանդուցեալ մօր առջև...

Այդ միջոցին նրա աչքերում երևացին մինչև անգամ արտասուքի կաթիլներ: Բայց Սիւրբին թափ տուեց նրա ձեռքը և վեր կացաւ, աւսելով:

— Ես կը մտածայի բոլորը, եթէ հաւատայի, որ քո խոստովանութիւնը անկեղծ է: Բայց դու խաբում ես ինձ:

— Աստուած, երկիրք, գետնը վկայ, որ չեմ խաբում: Գու զարթեցիր իմ մէջ մեռած խիղճս, Սիւրբի, դու կրկին վառեցիր ծնողական գութը, որ հանգած էր իմ սրտում: Մօրդ ուրաւականը գիշեր և ցերեկ հալածում է ինձ, հանգստութիւն չէ տալիս: Նա կը ներէ ինձ, եթէ դու ներես:

Վերջին խօսքերը ազդեցին Սիւրբի սրտին, նա պատրաստ էր զրկել իր հօրը, համբուրել նրա շրթունքը, որ արտասանեցին այդ սխալը, ապաշխարութեան խօսքերը, որ առաջին անգամ էր լսում նրա բերանից: Բայց այդ միջոցին վրանի մուտքի առջև արձանացաւ ծերունի ներքինագետի զայրացած պատկերը և լսելի եղաւ նրա սպառնական ձայնը:

— Գու, ասաց նա մէլքին, նախ քան մեղանչելը քո ընտանիքի, քո գաւակի և քո անբախտ կնոջ առջև, մեղանչել ես քո ազգի առջև, որի որդիքը քո հարստահարութիւններից աղատվելու համար, այսօր իրանց այրեցին: Գու մե-

ջը գիտեմ արժ. հօր խօսքերն էին պատճառը, թէ սիրտ չարժող երգասացութիւնները, որոնք կատարվում էին խաւարինի մի անմահ բարեբարի անուան յիշատակութեան ժամանակ, թէ խնդրի նուիրականութիւնը, ինչ և իցէ մի վայրկեանի մէջ բոլոր ներկայ եղողների նուէրները արդէն պատրաստ էին, որի դու:մարը այս սողերի հետ ուղարկում է խմբագրութեանը, խնդրելով հասցնել ուր հարկն է:

Ահաւասիկ նուիրատուների անունները: Բար. Մուշեղ քահանայ Տէր-Ղևոնդեան 1 ր., Գովհանէն քահանայ Տէր-Գրիգորեանց 1 ր., Պ. պ. Գովհանէն Տէր-Նիկողոսեանց 3 ր., Գովհանի Տէր-Արքայեանց 3 ր., Սարգիս Վարդանեան 3 ր., Յակոբ Պապուցեան 3 ր., Գալուստ Ղարիբեան 3 ր., Գրիգոր Լազրեան 3 ր., Գրիգոր Ղանդուղեան 1 ր., Ղազար Տէր-Ղազարեան 1 ր., Սամսոն Բարաձով 3 ր., Կարապետ Ղաբրեան 5 ր., և Եղորդ Գրիգորեան Գարութիւնեանց 15 ր.: Ընդամենը ք ա ո ս ու շ և հ ի ն դ (45) բուլլ:

Մ Ի Կ Ի Ը Ր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են տպել հետեւեալը: Յանկացողները մասնակցելու Հայկական Բարեգործական Նախագծի քննութեանը, հրաւիրվում են յունվարի 25-ին, կիրակի օր, առաւօտեան 11 ժամին շտաբի Բերկ Արժրուստ թատրօնը: Առաջին ժողովը եղաւ յունվարի 4-ին, իսկ կիրակի օր կը լինի երկրորդ ժողովը, նախագծի քննութիւնը շարունակելու նպատակով:»

ԲԱՂՈՒԻՅ Տեւապոտ խնդրում են մեզ յայտնել մեր լրագրի մէջ, որ «Մարդասիրական» ընկերութեան ընդհանուր ժողովը լինելու է յունվարի 25-ին:

Կովկասեան Բժշկական Ընկերութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ կիրակի, յունվարի 25-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում լինելու է պարահան դէս յօգուտ զանձարանի, որ հիմնված է Կովկասեան բժշկների չքաւոր որդիներ և այրիներին նպաստ հասցնելու նպատակով:

տակով: Տոմարներ կարելի է ստանալ Շահվերդովի պավիլիօնում և Թիֆլիսի կլուբի (ժողովարանի) շէնքարի մօտ: Տոմարների գինը սրբանորոգանց համար 2 բուլլ է, կանանց համար 1 բուլլ: Պարահանդէսը սկսվելու է երեկոյեան 9 ժամին:

Այս օրերս Թիֆլիսի ճանապարհի վրա աւազակները յարձակվելով հաւաքաբար յայտնի գրաց Մայիլի վրա, սպանել են նրան և խել են նրանից իր հետ տարած մատաղացու ուլարը: Այս գրաց կինը սովորութիւն ունէր ամեն շաբաթ օր բոլրիկ ստով Թէլէթ ուխտ գնալու: Չարմանալի չէ, արդեօք, որ նա, որ ուրիշների ապագան գուշակում էր, չը կարողացաւ խմանալ իր սեփական գլխի գալիքը: Ամբողջ Հաւաքարը մեծ տխրութեան մէջ է գրաց կնոջ կորուստի պատճառով և ասում են, որ Թէլէթը խառնել է այդ աստուածապաշտ կնոջից, որովհետև նա նորերումն մի ուրբաթ օր խօղի միս էր կերել:

ԲԱՂՈՒԻՅ մեզ գրում են, որ այդ քաղաքում շարունակվում է ստորագրութիւնը յօգուտ Կ. Պոլսի «Միացեալ Ընկերութեան» այդ ընկերութեանց ստացված ստորագրութեան թերթերի օգնութեամբ: Նոյն քաղաքից մեզ գրում են, որ յունվարի 13-ին այդտեղ սաստիկ ցրտեր են սկսվել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԲԱՂՈՒԻՅ ՏԵՍՈՒԹԻՆ

Թիւրքաց կառավարութեան վերջին շըրջաբերականը միատեսակ տպաւորութիւն չը գործեց այն պետութիւնների վրա, որոնց ներկայացուցիչներին նա յանձնվեցաւ: Ինչպէս երեւում է գերմանական և աւստրո-ունգարական պաշտօնական լրագրից, Վիեննայի և Բերլինի կառավարութիւններին շըջաբերականը ուրախութիւն պատճառեց: Փարիզի մէջ նա վատ տպաւորութիւն գործեց, որովհետև նա մի հարուած համարվեցաւ: Խարտեհեմի Սենտ-Կլերի ա-

Մէլքը անհարկութիւնը չափազանց վրաւորական էր: Ներքինագետը կծու կերպով պատասխանեց նրան.

— Ես այդ վաղուց կանէի, եթէ հարկադրված չը լինէի, Ամէլը անուան տակ ծածկվելով, պաշտպանել իմ ազգայիններին ձեզայիսների շարագործութիւններից: Ես յոյս ունեմ, որ մեր խօսաւորի պապը կը ներէ ինձ, որովհետև երբք գաւաճանած չեմ նրա եկեղեցուն, այլ որքան կարողացել եմ, պահպանել եմ նրա գառները ձեզ նման զայլերից...

— Եւ դու կը վարձատրվես այդ ծառայութիւններից համար...

— Չը լինի թէ դիտաւորութիւն ունես ինձ ևս մատնելու, խօսեց ներքինագետը զայրացած կերպով. — հրամայեցք, ճանապարհը ձեզ ցոյց կը տամ...

Մէլքը վեր կացաւ և միմիջաբով հեռացաւ: Սիւրբին և ներքինագետը մնացին միայնակ:

— Գու ի դու բարկացիր նրան, Ամէլդ, ասաց Սիւրբինը. — նա ամեն բան պատրաստ է անել:

— Անհոգ կացէք, տիկին, ոչինչ չի կարող անել, պատասխանեց ներքինագետը հանդարտութեամբ:— Նա ունի ինձ մօտ մի այնպիսի զաղանիք, եթէ խանին յայտնելու լինեմ, խաղտի նրան գլխատել կը տայ: Ես հէնց այս գիշեր նրան զգալ կը տամ, որ նրա կեանքը իմ ձեռքումն է, և նա լիզուց կը քաշէ...

Խորին տխրութեան մէջ սկսեց տիկինը դիմել դէպի իր վրանը: Նա իրան այնքան անբախտ էր զգում, որ լսում էր իր հօր մասին հարիւրաւոր վրաւորական խօսքեր, բայց բարկանալու իրաւունք չուներ: Ինչ կարող էր ասել դառն ճշմարտութիւնների դէմ: Նա ունէր մի հայր, որը ոչ երկնքում և ոչ այս աշխարհում մի հատիկ բարկեալ չուներ, որին գաւաճանած չը լինէր: Նա մինչև անգամ յանցաւոր էր խանի մօտ, որի բարեբարութիւնները վայելում էր:

(Կը շարունակուի)